ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ
ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

27 հունվար 2017 թ N 7-ա/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐ

28 ապրիլի 2017 թ N 164-ա/2

ՀԱՄԱՏԵՂ ՀՐԱՄԱՆ

ԵՐԵԽԱՆԵՐԻ ԽՆԱՄՔ ԵՎ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԽՆԱՄՎՈՂ ԵՎ (ԿԱՄ) ՍՈՎՈՐՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՆԴԵՊ ԿԱՄ ՆՐԱՆՑ ՄԻՋԵՎ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԿԱՍԿԱԾԵԼԻ ԴԵՊՔԵՐԻ ՀԱՅՏՆԱԲԵՐՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ ԵՎ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԿԱՍԿԱԾԵԼԻ ԵՎ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԴԵՊՔԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՏՅԱՆԻ ՁԵՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի օգոստոսի 5-ի N 1324-Ն որոշման հավելվածի 7-րդ կետի, ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 4-ի նիստի N 51 արձանագրային որոշման կետ 2-ի.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՆՔ՝

1. Հաստատել՝

1) երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում խնամվող և (կամ) սովորող երեխաների հանդեպ կամ նրանց միջև բռնության կասկածելի դեպքերի հայտնաբերման ընթացակարգը՝ համաձայն N 1 հավելվածի:

2) երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում խնամվող և (կամ) սովորող երեխաների հանդեպ կամ նրանց միջև բռնության կասկածելի և հաստատված դեպքերի գրանցման մատյանի ձևը՝ համաձայն N 2 հավելվածի:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ
ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

Ա. ԱՍԱՏՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐ

Լ. ՄԿՐՏՉՅԱՆ

Հավելված N 1

Հայաստանի Հանրապետության
աշխատանքի և սոցիալական
հարցերի նախարարի
2017 թվականի 27 հունվարի
թիվ 7-Ա/Լ հրամանի

Հայաստանի Հանրապետության
կրթության և գիտության
նախարարի
2017 թվականի _____ի
թիվ_____հրամանի

ԵՐԵԽԱՆԵՐԻ ԽՆԱՄՔ ԵՎ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԽՆԱՄՎՈՂ ԵՎ (ԿԱՄ) ՍՈՎՈՐՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՆԴԵՊ ԿԱՄ ՆՐԱՆՑ ՄԻՋԵՎ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԿԱՍԿԱԾԵԼԻ ԴԵՊՔԵՐԻ ՀԱՅՏՆԱԲԵՐՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն ընթացակարգով կարգավորվում են երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում խնամվող և (կամ) սովորող երեխաների հանդեպ կամ նրանց միջև բռնության կասկածելի դեպքերի հայտնաբերման հետ կապված հարաբերությունները:
2. Սույն ընթացակարգի հիմնական նպատակն է երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում (այսուհետ նաև՝ հաստատություն) սահմանել մեխանիզմներ՝ երեխաների հանդեպ կամ նրանց միջև բռնության դեպքերը հայտնաբերելու, բռնության ենթարկված երեխաների իրավունքները պաշտպանելու և նրանց համապատասխան աջակցություն տրամադրելու համար:

II. ԵՐԵԽԱՆԵՐԻ ԽՆԱՄՔ ԵՎ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԽՆԱՄՎՈՂ ԵՎ (ԿԱՄ) ՍՈՎՈՐՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՆԴԵՊ ԿԱՄ ՆՐԱՆՑ ՄԻՋԵՎ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԿԱՍԿԱԾԵԼԻ ԴԵՊՔԵՐԻ ՀԱՅՏՆԱԲԵՐՈՒՄԸ

3. Հաստատությունը երեխաների հանդեպ կամ նրանց միջև բռնության կասկածելի դեպքերի մասին տեղեկատվությունը կարող է ստանալ՝
   1) երեխայից կամ նրա ներկայացուցչից.
   2) պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, խնամակալության ու հոգաբարձության մարմինների, իրավաբանական և սույն կետի 1-ին ենթակետում չնշված այլ ֆիզիկական անձանց ներկայացրած տեղեկությունների, գրավոր և բանավոր դիմումների, ահազանգերի, զանգվածային լրատվամիջոցների հրապարակումների և այլ աղբյուրների միջոցով.

3) ինքնուրույն իրականացրած աշխատանքների արդյունքում՝ հաստատության աշխատողների կողմից սույն ընթացակարգի 6-րդ կետում նշված մասնագիտական մեթոդների կիրառման շնորհիվ :
4. Երեխաների հանդեպ կամ նրանց միջև բռնության յուրաքանչյուր կասկածելի դեպքի մասին տեղեկատվությունը ստանալուց հետո, տվյալ տեղեկատվությունը ստացած յուրաքանչյուր աշխատող այդ մասին անհապաղ, բայց ոչ ուշ, քան մեկ ժամվա ընթացքում տեղեկացնում է հաստատության գործադիր մարմնի ղեկավարին, իսկ այն դեպքում, երբ այդ տեղեկատվությունը ստացվել է տվյալ հաստատությունում աշխատաժամանակի ավարտից կամ ժամը 18.00-ից հետո կամ ոչ աշխատանքային օրերին, դրա մասին իրազեկում է հաստատության համապատասխան լիազորություններով օժտված աշխատողին (պաշտոնատար անձին)՝ սույն կետով սահմանված ժամկետում:
5. Սույն ընթացակարգի 4-րդ կետով սահմանված տեղեկատվությունը ստանալուց հետո անհապաղ, բայց ոչ ուշ, քան մեկ օրվա ընթացքում, հաստատության գործադիր մարմնի ղեկավարը (իսկ այն դեպքում, երբ տեղեկատվությունը ստացվել է տվյալ հաստատությունում աշխատաժամանակի ավարտից կամ ժամը 18.00-ից հետո կամ ոչ աշխատանքային օրերին՝ հաստատության համապատասխան լիազորություններով օժտված աշխատողը (պաշտոնատար անձը) կամ գործադիր մարմնի ղեկավարը) ապահովում է «Երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում խնամվող և (կամ) սովորող երեխաների հանդեպ կամ նրանց միջև բռնության կասկածելի և հաստատված դեպքերի գրանցման մատյան»-ում (այսուհետ՝ գրանցամատյան) բռնության կասկածելի դեպքի մասին համապատասխան գրառման կատարումը և կազմակերպում է իրավիճակի ուսումնասիրություն՝ տեղեկատվությամբ հայտնի դարձած բռնության կասկածելի դեպքի հետ կապված հանգամանքները բացահայտելու, բռնության առկայության կամ դրա բացակայության փաստը պարզելու նպատակով:
6. Բռնության կասկածելի դեպքի հետ կապված հանգամանքները բացահայտելու, բռնության առկայության կամ դրա բացակայության փաստը պարզելու նպատակով իրավիճակի ուսումնասիրությունն իրականացնում են հաստատության համապատասխան լիազորություններով օժտված աշխատողները (սոցիալական աշխատանքի մասնագետ, հոգեբան, բժիշկ, մանկավարժ և այլն) միայնակ կամ բազմամասնագիտական խմբի կազմով՝ հարցազրույցի և (կամ) դիտարկման մեթոդներով, ընդ որում, ենթադրյալ բռնության ենթարկված երեխայի՝ հաստատությունում չգտնվելու դեպքում, իրավիճակի ուսումնասիրություն կատարելու նպատակով իրականացվում է այցելություն երեխայի փաստացի գտնվելու վայր: Սույն կետում նշված մեթոդներով իրավիճակի ուսումնասիրությունը՝ ըստ տևողության և շարունակականության, կարող է լինել ինչպես մեկանգամյա, այնպես էլ բազմակի՝ կապված պարզման ենթակա հանգամանքների հետ:
7. Հարցազրույցի նպատակը բռնության կասկածելի դեպքի հետ կապված հանգամանքները պարզելու համար անհրաժեշտ տեղեկությունների ամբողջական

ձեռքբերումն է, որի համար նպատակաուղղված բանավոր զրույց է իրականացվում սույն ընթացակարգի 6-րդ կետում նշված աշխատողի (կամ բազմամասնագիտական խմբի անդամների) և ենթադրյալ բռնության ենթարկված երեխայի, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև ենթադրյալ բռնություն կատարած անձի, երեխայի օրինական ներկայացուցչի և այլ անձանց միջև:

8. Հարցազրույցի միջոցով պարզման ենթակա տեղեկությունների շրջանակը յուրաքանչյուր դեպքի համար կարող է լինել տարբեր՝ պայմանավորված բռնության կասկածելի դեպքի հետ կապված հանգամանքներով և առանձնահատկություններով:

9. Հարցազրույցի մեթոդով պարզման ենթակա տեղեկությունների ընդհանուր շրջանակը սահմանված է սույն ուղեցույցի 15-րդ կետի 3-րդ, 11-րդ ենթակետերով, 16-րդ կետի 1-ին, 3-րդ, 6-րդ, 12-րդ, 13-րդ, 18-րդ, 19-րդ, 22-րդ, 28-րդ ենթակետերով, 17-րդ կետի 7-րդ, 9-րդ ենթակետերով:

10. Դիտարկման մեթոդով հնարավորություն է ընձեռվում ճշտել, թե որքանով է բռնության կասկածելի դեպքի հետ կապված ներկայացրած տեղեկատվությունը համապատասխանում իրականությանը, ինչպես նաև ստանալ անհրաժեշտ այնպիսի տեղեկություններ, որոնք հնարավոր չի պարզել հարցազրույցի միջոցով:

11. Դիտարկման մեթոդով պարզման ենթակա տեղեկությունների ընդհանուր շրջանակը սահմանված է սույն ընթացակարգի 15-րդ կետի 1-ին, 2-րդ ենթակետերով, 16-րդ կետի 4-րդ, 5-րդ, 29-րդ, 30-րդ ենթակետերով, 18-րդ կետի 1-5-րդ ենթակետերով:

12. Սույն ընթացակարգի 15-րդ կետի 4-10-րդ ենթակետերով, 16-րդ կետի 2-րդ, 7-11-րդ, 14-16-րդ, 20-21-րդ և 23-27-րդ ենթակետերով, 17-րդ կետի 1-6-րդ, 8-րդ, 10-15-րդ ենթակետերով, 18-րդ կետի 6-10-րդ ենթակետերով սահմանված տեղեկությունները կարող են պարզվել ինչպես հարցազրույցի, այնպես էլ դիտարկման մեթոդով:

13. Բռնության հաստատված առանձին դեպքերում, ինչպես նաև բոլոր այն դեպքերում, երբ ենթադրյալ բռնության դեպքը թեև չի հաստատվել, սակայն առկա են հիմնավոր կասկածներ այն մասին, որ երեխայի հանդեպ իրականացվել է բռնություն, իրականացվում են հետևյալ գործողությունները.

1) եթե բռնության դեպքը տեղի է ունեցել հաստատությունում խնամվող և (կամ) սովորող երեխաների միջև, հաստատության համապատասխան մասնագետներն իրականացնում են առերեսում, զրույց, և վեճը խորքային չլինելու դեպքում հաշտեցնում են երեխաներին, հակառակ դեպքերում՝ իրականացնում են մասնագիտական աշխատանք բռնության ենթարկված երեխայի և բռնարարի հետ, այդ թվում՝ սթրեսային վիճակներին դիմակայելու, երեխայի սոցիալական հմտությունները և ինքնիրացումը (ինքնորոշումը) զարգացնելու նպատակով.

2) եթե երեխայի հանդեպ բռնությունն իրականացվել է երեխայի ընտանիքում, ապա հաստատության մասնագետները համապատասխան մասնագիտական աշխատանք են իրականացնում ինչպես երեխայի, այնպես էլ նրա ընտանիքի անդամների հետ, սոցիալ-հոգեբանական աշխատանքի միջոցով նպաստում են ընտանիքում

բարենպաստ մթնոլորտի վերականգնմանը, ընդ որում, բոլոր այն դեպքերում, երբ առկա են ողջամիտ կասկածներ, որ երեխայի օրինական ներկայացուցիչ հանդիսացող անձը որևէ կերպ մասնակցել է երեխայի նկատմամբ իրականացված բռնությանը, հաստատությունը՝ ոչ ուշ, քան այդ տեղեկությունը իրեն հայտնի դառնալուց մեկ օրվա ընթացքում, այդ մասին հայտնում է տվյալ երեխայի փաստացի բնակության վայրի տարածքը սպասարկող սոցիալական աջակցության տարածքային գործակալությանը (բաժնին), Հայաստանի Հանրապետության մարզպետարանի (Երևանի քաղաքապետարանի) ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնին և երեխայի փաստացի գտնվելու վայրի խնամակալության և հոգաբարձության մարմին.

3) եթե երեխայի հանդեպ բռնությունն իրականացվել է հաստատության աշխատողի կողմից, ապա՝

ա. հաստատությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և իր ներքին իրավական ակտերով սահմանված կարգով իրականացնում է ծառայողական քննություն, Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դեպքերում և կարգով կարող է հաստատության աշխատողի նկատմամբ կիրառել կարգապահական տույժ,

բ. հաստատության մասնագետները համապատասխան մասնագիտական աշխատանք են իրականացնում բռնության ենթարկված երեխայի հետ, այդ թվում՝ հոգեկան կյանքի կարգավորման, սոցիալական միջավայրին հարմարվելու նպատակով.

4) եթե երեխայի հանդեպ բռնությունն իրականացվել է այլ դաստիարակչական, ուսումնական, բուժական, բնակչության սոցիալական պաշտպանության կամ նման այլ կազմակերպություններում, ապա՝

ա. հաստատությունը՝ ոչ ուշ, քան այդ տեղեկությունը իրեն հայտնի դառնալուց մեկ օրվա ընթացքում, այդ մասին հայտնում է տվյալ կազմակերպությանը, ինչպես նաև երեխայի օրինական ներկայացուցչին (բացառությամբ այն դեպքերի, երբ խնամակալության կամ հոգաբարձության կարիք ունեցող և հաստատությունում խնամվող երեխայի խնամակալը կամ հոգաբարձուն այդ հաստատությունն է),

բ. հաստատության մասնագետները համապատասխան մասնագիտական աշխատանք են իրականացնում բռնության ենթարկված երեխայի հետ, հանդիպում և բացատրական աշխատանքներ են տանում երեխայի հանդեպ բռնություն իրականացրած անձի հետ.

5) եթե երեխայի հանդեպ բռնությունն իրականացվել է սույն կետի 1-4-րդ ենթակետերում չնշված այլ դեպքերում, ապա՝

ա. հաստատությունը՝ ոչ ուշ, քան այդ տեղեկությունը իրեն հայտնի դառնալուց մեկ օրվա ընթացքում, այդ մասին հայտնում է երեխայի օրինական ներկայացուցչին (բացառությամբ այն դեպքերի, երբ խնամակալության կամ հոգաբարձության կարիք ունեցող և հաստատությունում խնամվող երեխայի խնամակալը կամ հոգաբարձուն այդ հաստատությունն է),

բ. հաստատության մասնագետները բռնության ենթարկված երեխայի հետ իրականացնում են համապատասխան մասնագիտական աշխատանք, այդ թվում՝ սթրեսային վիճակներին դիմակայելու, սոցիալական հմտությունները և ինքնիրացումը (ինքնորոշումը) զարգացնելու և հասարակության կյանքում նրա արդյունավետ և լիարժեք ներգրավվածությանն աջակցելու նպատակով.

6) սույն կետի 1-5-րդ ենթակետերում նշված յուրաքանչյուր դեպքում, երբ բռնության դեպքը պարունակում է առերևույթ հանցագործության հատկանիշներ, ապա հաստատությունն այդ մասին անհապաղ տեղեկացնում է Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանություն (այսուհետ՝ ոստիկանություն) և երեխայի անվտանգության ապահովման նկատառումներից ելնելով ու գործի քննության շահերից ելնելով, սույն կետի 1-5-րդ ենթակետերում նշված համապատասխան միջոցառումներն իրականացնում է ոստիկանության հետ համաձայնեցված ժամկետներում:

III. ԲՌՆՈՒԹՅԱՆ ԱՌԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՄ ԴՐԱ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ԸՆՁԵՌՈՂ ՑՈՒՑԻՉՆԵՐԸ

14. Ըստ երեխայի հանդեպ բռնության տեսակների՝ տարբերակվում են բռնության առկայությունը կամ դրա բացակայությունը հաստատելու հնարավորություն ընձեռող հետևյալ ցուցիչները (այսուհետ՝ բռնության ցուցիչներ).

1) ֆիզիկական բռնության ցուցիչներ,
2) սեռական բռնության ցուցիչներ,
3) հոգեբանական բռնության ցուցիչներ,
4) անտեսման ցուցիչներ:

15. Ֆիզիկական բռնության ցուցիչներն են՝

1) մարմնի վրա առկա վնասվածքները (այդ թվում՝ փափուկ հյուսվածքների վնասվածքներ, վերքեր գլխի կամ դեմքի վրա, կոտրված ատամներ, տեղաշարժված ծնոտ, կապտուկներ, մարմնի վրա ատամնահետքեր, մատնահետքեր, այրվածքներ).
2) վնասվածքների հետքերը կոծկելու նպատակով եղանակային պայմաններին անհարիր հագնված լինելը (օրինակ՝ շոգ եղանակին երկարաթև հագուստներ հագնելը, սենյակում արևային ակնոցներ կրելը և այլն).
3) վնասվածքների պատճառները թաքցնելու ձգտումը.
4) տարիքին ոչ հատուկ լալկանությունը.
5) բարձր տագնապայնությունը՝ երեխայի մոտ բացասական հուզական վիճակը, որն արտահայտվում է անորոշության զգացումով, բացասական, վտանգավոր իրադարձությունների սպասումով, տհաճ կանխազգացումով.
6) մարդկանց և միջավայրի հանդեպ վախի զգացումը.
7) շրջապատող մարդկանց հանդեպ ագրեսիվ կամ դյուրագրգիռ վերաբերմունքը.
8) կենդանիների հանդեպ դաժան վերաբերմունքը.
9) ինքնամփոփ լինելը, շրջապատից մեկուսացվածությունը.

10) ինքնասպանության փորձը կամ ինքնասպանություն կատարելու մասին մտքեր արտահայտելը.
11) տնից կամ հաստատությունից փախուստը կամ փախուստի փորձերը:
16. Սեռական բռնության ցուցիչներն են՝
1) սեռական հարաբերության կամ սեքսուալ բնույթի գործողություններ կատարելուն հարկադրելը.
2) հղիությունը.
3) հղիության արհեստական ընդհատումները.
4) սեռական օրգանների վնասվածքները (այդ թվում՝ կուսաթաղանթի վնասվածքը).
5) կապտուկները՝ հատկապես այտերի, պարանոցի, ականջի ծայրի վրա, ինչպես նաև հետույքի, փորի, ազդրերի, սեռական օրգանների շրջանում.
6) սեռական կյանքի մասին տարիքին ոչ հարիր գիտելիքների իմացությունը.
7) սեքսուալ բնույթ ունեցող խաղերով հետաքրքրվածությունը, այդ թվում՝ սովորական խաղալիքների, տիկնիկների օգտագործմամբ.
8) սեռական ակտի իմիտացիան.
9) կոնկրետ անձի (կամ անձանց) և (կամ) երևույթի նկատմամբ վերաբերմունքի կտրուկ փոփոխությունները (օրինակ՝ երբ երեխան կտրականապես հրաժարվում է վերելակ նստել, վախենում է կոնկրետ անձի (անձանց)հետ միայնակ մնալուց կամ իր ատելությունն է հայտնում նրա (նրանց) նկատմամբ և այլն).
10) երեխայի մոտ նվերների և դրամի առկայությունը, մանավանդ՝ երբ հայտնի չէ դրանց ծագման աղբյուրը.
11) անվստահությունը և (կամ) վախը որոշակի տիպի անձանց հանդեպ՝ տարիքով, սեռով, արտաքինով պայմանավորված.
12) երեխային պոռնոգրաֆիկ և (կամ) էրոտիկ բնույթի նկարներ և (կամ) ֆիլմեր դիտելուն հարկադրելը.
13) երեխային պոռնոգրաֆիկ և (կամ) էրոտիկ բնույթի գրականություն ընթերցելուն հարկադրելը.
14) երեխայի մոտ պոռնոգրաֆիկ և (կամ) էրոտիկ բնույթի նկարների կամ գրականության առկայությունը.
15) ընկճախտը.
16) բարձր տագնապայնությունը՝ երեխայի մոտ բացասական հուզական վիճակը, որն արտահայտվում է անորոշության զգացումով, բացասական, վտանգավոր իրադարձությունների սպասումով, տհաճ կանխազգացումով.
17) քնի հաճախակի խանգարումները կամ գիշերային մղձավանջները.
18) ցածր ինքնագնահատականը.
19) երրորդ դեմքով պատմվող կասկածելի պատմությունները.
20) ալկոհոլի և(կամ) թմրամիջոցների և (կամ) հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի և (կամ) դեղերի օգտագործումը.
21) ինքնասպանության փորձը կամ ինքնասպանություն կատարելու մասին մտքեր արտահայտելը.

22) տնից կամ հաստատությունից փախուստը կամ փախուստի փորձերը.
23) 14 տարեկան և բարձր տարիքի երեխաների մոտ՝ սեփական արտաքինի հանդեպ անտարբերությունը, չխնամվածությունը, չհարդարվելը.
24) 14 տարեկան և բարձր տարիքի երեխաների մոտ՝ անընդհատ լվացվելու, ցնցուղ ընդունելու, մարմինը մաքրելու ցանկությունը, դրա մասին սևեռուն մտքերը և (կամ) այդպիսի գործողություններ կատարելը.
25) մանկահասակ տարիքին բնորոշ (մանկայնական) վարքագծի դրսևորումը ավելի բարձր տարիքի երեխաների մոտ.
26) մեծահասակներին բնորոշ վարքագծի դրսևորումը (մասնավորապես՝ ձայնի ինտոնացիան, շարժուձևերը կրկնելը).
27) մարդկանց և միջավայրի հանդեպ վախի զգացումը.
28) սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդությունների առկայությունը.
29) քաշի կտրուկ փոփոխությունները (ավելացում կամ նվազում).
30) երեխայի հագուստի, մարմնի, սեռական օրգանների շրջանում սերմնահեղուկի հետքերը և (կամ) պատռված, արյունոտված ներքնաշորերը.
31) սեփական սեռական օրգանների ցուցադրումը:
17. Հոգեբանական բռնության ցուցիչներն են՝
1) ընկճախտը կամ տևական ժամանակահատվածում ընկճված վիճակը.
2) շրջապատող մարդկանց հանդեպ ագրեսիվ կամ դյուրագրգիռ վերաբերմունքը.
3) ախորժակի կորուստը, ուտելու ցանկության բացակայությունը կամ անընդհատ ուտելու (հիմնականում՝ քաղցրեղեն) անհագ ցանկությունը.
4) մշտապես կամ երկարատև տխրությունը, տխուր տեսք ունենալը.
5) բարձր տագնապայնությունը՝ երեխայի մոտ բացասական հուզական վիճակը, որն արտահայտվում է անորոշության զգացումով, բացասական, վտանգավոր իրադարձությունների սպասումով, տհաճ կանխազգացումով.
6) քնի հաճախակի խանգարումները կամ գիշերային մղձավանջները.
7) դպրոցական երեխաների մոտ՝ ցածր առաջադիմությունը.
8) ինքնամփոփ լինելը, ինքնամեկուսացումը.
9) ցածր ինքնագնահատականը՝ սեփական հնարավորությունների, որակների և սոցիալական դիրքի գնահատման ցածր մակարդակը.
10) անհարկի զիջողականությունը կամ արտահայտված զգուշավորությունը.
11) շրջապատի հետ սոցիալական կապեր հաստատելու կարողությունների բացակայությունը կամ այդպիսի կապերի կորուստը.
12) ինքնասպանության փորձը կամ ինքնասպանություն կատարելու մասին մտքեր արտահայտելը.
13) գիշերամիզությունը.
14) 14 տարեկան և բարձր տարիքի երեխաների մոտ՝ սեփական արտաքինի հանդեպ անտարբերությունը, չխնամվածությունը, չհարդարվելը.
15) զարգացման հապաղումները:
18. Անտեսման ցուցիչներն են՝

1) հոգնած կամ քնկոտ կամ փնթի տեսքը,
2) գունատ դեմքը կամ այտուցված կոպերը.
3) տարիքասեռային առանձնահատկություններին կամ եղանակային պայմաններին անհամապատասխան հագնված լինելը.
4) տհաճ հոտի առկայությունը.
5) հասակակիցների համեմատ՝ քաշի կամ հասակի հապաղումը.
6) սովի մշտական զգացողությունը.
7) դասերից հաճախակի բացակայությունը.
8) վարքագծային շեղումները, հակահասարակական կամ բռնկուն պահվածքը (ընդհուպ մինչև վանդալիզմ կամ ագրեսիվություն).
9) ցածր ինքնագնահատականը.
10) ցածր առաջադիմությունը:

19. Բռնության ցուցիչներ կարող են լինել նաև սույն ընթացակարգի 15-րդ, 16-րդ, 17-րդ և 18-րդ կետերում չնշված այնպիսի այլ գործոններ, որոնք սույն ընթացակարգի 6-րդ կետում նշված աշխատողի (կամ բազմամասնագիտական խմբի անդամների) հիմնավոր կարծիքով, այլ հանգամանքների հետ փոխկապակցվածության և պատճառահետևանքային կապերի առումով, թույլ են տալիս ենթադրել հնարավոր բռնության առկայությունը:

IV. ԲՌՆՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿՎԱԾ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՈՒՂՂՈՐԴՈՒՄԸ, ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆ ՇԱՀԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

20. Ուղղորդումը բռնության ենթարկված երեխայի և համապատասխան պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմնի, հասարակական կամ այլ կազմակերպության միջև կապի ստեղծումն է և երեխայի շահերին առնչվող խնդիրների լուծումը համապատասխան պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմին, հասարակական կամ այլ կազմակերպություն փոխանցելը:

21. Հաստատությունը, բռնության հաստատված առանձին դեպքերում, ինչպես նաև յուրաքանչյուր այն հիմնավոր կասկածի դեպքում, որ երեխան ենթարկվել է ընտանեկան բռնության, երեխային և երեխայի օրինական ներկայացուցչին ուղղորդում է տվյալ երեխայի փաստացի բնակության վայրի տարածքն սպասարկող սոցիալական աջակցության տարածքային գործակալություն (բաժին) կամ Հայաստանի Հանրապետության մարզպետարանի (Երևանի քաղաքապետարանի) ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժին կամ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 1069-Ն որոշմամբ հաստատված N 3 հավելվածով սահմանված ժամանակավոր օթևան՝ կացարան (այսուհետ՝ օթևան) կամ օթևան տրամադրող կազմակերպություն (դրա մշտական գործող մարմնի գտնվելու վայր)՝ բացառությամբ այն դեպքերի, երբ

խնամակալության կամ հոգաբարձության կարիք ունեցող և հաստատությունում խնամվող երեխայի խնամակալը կամ հոգաբարձուն այդ հաստատությունն է:

22. Ուղղորդումն իրականացվում է բռնության դեպքի մասին տեղեկանալուց կամ բռնության դեպքի վերաբերյալ հիմնավոր կասկած առաջանալուց անմիջապես հետո՝ բանավոր կերպով:

23. Օթևանում ընտանեկան բռնության ենթարկված երեխայի ընդունելությունն իրականացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 1069-Ն որոշմամբ հաստատված N 3 հավելվածով սահմանված կարգով:

24. Խնամակալության կամ հոգաբարձության կարիք ունեցող և հաստատությունում խնամվող՝ բռնության ենթարկված երեխայի իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը Հայաստանի Հանրապետության օրենքներով իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնում է այդ հաստատությունը:

25. Բռնության ենթարկված երեխայի իրավունքների և օրինական շահերի պաշտպանության նպատակով, հաստատությունը՝ իր գործառույթների իրականացման շրջանակներում, ըստ անհրաժեշտության համագործակցում է ոստիկանության, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման այլ մարմինների, բժշկական կազմակերպությունների, տարածքային մակարդակում գործող՝ «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետով սահմանված՝ աջակցող ցանցի անդամների, այլ իրավաբանական և ֆիզիկական անձանց հետ:

Հավելված N 2

Հայաստանի Հանրապետության
աշխատանքի և սոցիալական հարցերի
նախարարի 2017 թվականի 27 հունվարի
թիվ 7-Ա հրամանի

Հայաստանի Հանրապետության
կրթության և գիտության նախարարի
2017 թվականի _____-ի
թիվ_____հրամանի

Ձև

ԵՐԵԽԱՆԵՐԻ ԽՆԱՄՔ ԵՎ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԽՆԱՄՎՈՂ ԵՎ (ԿԱՄ) ՍՈՎՈՐՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՆԴԵՊ ԿԱՄ ՆՐԱՆՑ ՄԻՋԵՎ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԿԱՍԿԱԾԵԼԻ ԵՎ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԴԵՊՔԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՏՅԱՆԻ

N	Բռնության կասկածելի դեպքի գրանցման օրը, ամիսը, տարին	Բռնության ենթարկված երեխայի անունը, ազգանունը, հայրանունը	Բռնության ենթարկված երեխայի ծննդյան օրը, ամիսը, տարին	Բռնության ենթարկված երեխայի կարգավիճակը (միակողմանի կամ երկկողմանի ծնողազուրկ և այլն)	Բռնության ենթարկված երեխայի բնակության վայրի հասցեն	Բռնության տեսակը	Բռնության դեպքի վերաբերյալ տեղեկատվություն տրամադրող մարմնի (կազմակերպության) անվանումը կամ ֆիզիկական անձի անուն, ազգանունը	Բռնության դեպքի վերաբերյալ տեղեկատվության տրամադրման օրը, ամիսը, տարին	Բռնության դեպքը հաստատվելու դեպքում՝ այն հաստատված համարվելու օրը, ամիսը, տարին	Բռնության կատարման վայրը, օրը, ամիսը, տարին	Երեխայի ուղղորդման դեպքում՝ համապատասխան մարմնի (կազմակերպության) անվանումը, ուղղորդման օրը, ամիսը, տարին	Այլ տեղեկատվություն